ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՍԵՓԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ ԱՏԵՍՏԱՎՈՐՎԱԾ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ ԹԻՎ ԿԱ-09.06.01.28-47

ք. Երևան «26»«նոյեմբեր»2021թ

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Վ. Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու) մի կողմից, և «Արմավիրի Ռ. Եղոյանի անվան թիվ 1 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Ն. Դոլինյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, հիմք ընդունելով 2021 թվականի նոյեմբերի 5-ի ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի «Սեփական նախաձեռնությամբ (կամավոր) ատեստավորման արդյունքում ատեստավորում անցած և հավելավճար ստացող ուսուցիչների մասին» թիվ 1687-Ա հրամանը կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն պարտավորվում է ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի 09.06.01.«28. Ատեստավորման նոր համակարգի ներդրում՝ ուղղված ուսուցիչների որակի բարձրացմանը» ծրագրի իրականացման համար սույն պայմանագրի 2.1. կետում նշված միջոցները հատկացնել Կատարողին, իսկ Կատարողը ստանձնում պարտավորություն 2021 թվականի ընթացքում իրականացնել թվով 10 կամավոր ատեստավորված մանկավարժների հավելավճարների տրամադրումը՝ (այսուհետև՝ Աշխատանք):

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

2.1. Սույն պայմանագրով կատարված Աշխատանքի ընդհանուր գինը կազմում է 973800 (Ինը հարյուր յոթանասուներեք հազար ութ հարյուր) ՀՀ դրամ:

2.2 Պատվիրատուն համաձայն Կատարողի կողմից ներկայացված հայտի կատարում է վճարում անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի գանձապետական հաշվին փոխանցելու միջոցով:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1.Պատվիրատուն ցանկացած ժամանակ իրավունք ունի ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.2. Պատվիրատուն ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

3.4. Կատարողը պետք է ապահովի սույն պայմանագրի 1.1 կետում նախատեսված նպատակների իրականացումը:

3.5. Սույն պայմանագրի 2.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն բացառապես սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան:

3.6. Կատարողի կողմից ստացված և սահմանված ժամկետներում չօգտագործված միջոցները վերադարձվում է Պատվիրատուին:

3.7. Կատարողը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.8 Կատարողը պարտավոր է յուրաքանչյուր եռամսյակ ներկայացնել հաշվետվություններ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թվականի փետրվարի 4-ի թիվ 104-Ն հրամանի և ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող կազմակերպություններին առընչվող այլ իրավական ակտերի:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է պետական մարմնին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պատվիրատունսույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

5.ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1. Սույն պայմանագրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը:

5.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:

5.3 Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

6 ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ ա տ վ ի ր ա տ ու	Կ ա տ ա ր ո ղ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Արմավիրի Ռ. Եղոյանի անվան թիվ 1 ավագ դպրոց» ՊՈԱԿ
ք. Երևան, Կառավարական 2 շենք	ք.Արմավիր, Հ.Ավետիսյան 4
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011022606	Հ/Հ 900338000459
ՀՎՀՀ 02698732	ՀՎՀՀ 04407433
Նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող	Տնօրեն
_____ Վ. Գասպարյան	_____ Ն. Դոլինյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

987

Հավելված N 1
«26»«նոյեմբեր»2021թ կնքված
թիվ ԿԱ-09.06.01.28-47 պայմանագրի

Ատեստավորված մանկավարժներին հավելավճարի հատկացման ցուցակ

Հ/Հ	Անուն, Ազգանուն Հայրանուն	Հրամանի ամիս, ամսաթիվը և համարը	Առարկայի անվանում	Ընդամենը գումարը /հազար դրամ/
1	Գևորգյան Կարինե Ժորայի	05.11.2021թ թիվ 1687-Ա հրաման	Քիմիա	64.8
2	Ստեփանյան Լուսինե Ստեփանի	05.11.2021թ թիվ 1687-Ա հրաման	Քիմիա	69.6
3	Մանուչարյան Էմիլյա Մաքսիմի	05.11.2021թ թիվ 1687-Ա հրաման	Կենսաբանություն	75.3
4	Միերյան Գայանե Սուրենի	05.11.2021թ թիվ 1687-Ա հրաման	Կենսաբանություն	75.3
5	Սահակյան Արմինե Աշոտի	05.11.2021թ թիվ 1687-Ա հրաման	Հայոց լեզու	86.1
6	Սրապիոնյան Աիդա Ալբերտի	05.11.2021թ թիվ 1687-Ա հրաման	Ֆիզիկա	100.5
7	Ենոքյան Սարինե Հրանտի	05.11.2021թ թիվ 1687-Ա հրաման	Հայոց պատմություն	78.6
8	Մկրտչյան Կարինե Հովհաննեսի	05.11.2021թ թիվ 1687-Ա հրաման	Մաթեմատիկա	129.0
9	Հովհաննիսյան Լյուբա Վոլոդյայի	05.11.2021թ թիվ 1687-Ա հրաման	Մաթեմատիկա	178.8
10	Վարդանյան Շուշանիկ Վանյայի	05.11.2021թ թիվ 1687-Ա հրաման	Մաթեմատիկա	115.8
	ԸՆԴԱՄԵՆԸ			973.8

Պ ա տ վ ի ր ա տ ու
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք. Երևան, Կառավարական 2 շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011022606
ՀՎՀՀ 02698732
Նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող

_____ Վ. Գասպարյան
(ստորագրություն)
Կ.Տ

Կ ա տ ա ր ո ղ
«Արմավիրի Ռ. Եղոյանի անվան թիվ 1 ավագ դպրոց» ՊՈԱԿ
ք.Արմավիր, Հ.Ավետիսյան 4
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900338000459
ՀՎՀՀ 04407433

Տնօրեն

_____ Ն. Դոլինյան
(ստորագրություն)
Կ.Տ